

Ըստ Աժ պատգամավոր Արթուր Խաչատրյանի՝ «Պետք չի փորձագետ լինել տեքստ կարդալու համար. հունվարի 14-ի փաստաթղթում գրված է, որ Ամերիկայի շահը միներալներն են, այսինքն հանքանյութերը, օգտակար հանածոները և հազվագյուտ հողային մետաղները: Ամերիկացիները չեն էլ թաքցնում, որ իրենք շահագրգռված են, հետաքրքրված են Սյունիքի հանքային ռեսուրսներով»:

Չորեքշաբթի
18 փետրվարի 2026թ.
№ 3 (653)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԹԱՎ
ՊԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 6 0 0 3 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Ադրբեջանում ապօրինաբար պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների նկատմամբ կայացվել են ակնհայտ շինծու դատավճիռներ

Սյունյաց աշխարհն իր զորակցությունն է հայտնում Արցախից պատանդառված պետական գործիչներին, ռազմագերիներին և նրանց ընտանիքներին: Իսկ տեղի ունեցածը գնահատում ենք իբրև դատավճիռ ընդդեմ հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության:

Տազնապալի նախադեպ և պատմական խայտառակություն. ՀՀ գլխավոր դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ

Փետրվարի 14-ին ՀՀ գլխավոր դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի նկատմամբ: Հայոց Նվիրապետը քրեական հետապնդման է ենթարկվում նրա համար, որ կարգալուծ է արել Գևորգ (Արման) Սարոյանին՝ դրանով «խոչընդոտելով» նրա պաշտոնավարմանը որպես թեմակալ առաջնորդ: Արգելվել է Վեհափառ հայրապետի ելքը Հայաստանից, ինչով (ըստ փաստաթղթի Արա Չոհրաբյանի) փորձ է արվել ձախողել Ավստրիայում կայանալիք եպիսկոպոսաց ժողովը: Մինչ այդ՝ հունվարի 31-ին, դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար, մեղադրանք էր ներկայացվել վեց եպիսկոպոսի՝



նրանց նույնպես արգելելով լքել ՀՀ տարածքը: Ըստ իրավապաշտպանների՝ Կաթողիկոսին և վեց եպիսկոպոսին քրեական մեղադրանք առաջադրելը, նրանց տեղաշարժման իրավունքը սահմանափակելն անթաքույց հետապնդում է Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոսաց ժողովին նրանց

մասնակցությունն արգելելու նպատակ: Այդ արգելքը հետևանք է ՀՀ սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների կոպիտ խախտման: Տեղի ունեցածն աննախադեպ է Հայ առաքելական եկեղեցու 1700 և ավելի տարիների պատմության մեջ:

Հետևողականորեն պայքարելու ենք մեր հայրենակիցների՝ հայրենի բնակավայրեր վերադառնալու համար

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը, որպես արցախահայության օրինական ներկայացուցչական մարմին, խստորեն դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած շինծու «դատավարությունները» Արցախի Հանրապետության գերեզմարված հայազգի ռազմաքաղաքական գործիչների և քաղաքացիական անձանց նկատմամբ:

Այդ գործընթացներում ներկայացված շինծու մեղադրանքներն ու դրանց հիման վրա ընդունված դատավճիռները որևէ կապ չունեն արդարադատության հետ և հանդիսանում են պետական ահաբեկչության ու քաղաքական հաշվեհարդարի բացահայտ դրսևորում՝ նպատակ ունենալով վարկաբեկել հայության երեք տասնամյակից ավելի տևած սեփական իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարը, որն իրականացվել է միջազգային իրավունքի, մասնավորապես, դրա հիմնարար սկզբունքներից մեկի՝ ինքնորոշման իրավունքի լիակատար համապատասխանությամբ:

Ադրբեջանում այդ շինծու «դատավարությունները» շարունակությունն են Արցախի դեմ 2020թ. սանձագերծված պատերազմական հանցագործություններով ուղեկցվող ռազմական ագրեսիայի և 2023թ. իրականացված էթնիկ գոտումների ու ցեղասպանական գործողությունների, որոնք միջազգային իրավունքը միանշանակորեն որակում է որպես մարդկության դեմ կատարված հանցագործություններ:

Անընդունելի և դատապարտելի է Հայաստանի Հանրապետության իշխանությունների շարունակական անգործությունն ու անտարբերությունը ոչ միայն հայրենակիցների նկատմամբ ներկայացված շինծու մեղադրանքների ու կայացված սարքովի «դատավճիռների» նկատմամբ, այլև քաղաքական կարճատեսությունը, քանի որ դրանով Հայաստանի Հանրապետության դեմ ձևավորվում են ապագայում ներկայացվելիք մեղադրանքների հիմքեր՝ որպես ահաբեկչությունը խրախուսած պետություն:

Անկախ այն բանից՝ միջազգային հանրությունը աշխարհաքաղաքական վայրկյանումների բովում նկատում է դա, թե ոչ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը երեք տասնամյակից ավելի եղել է միջազգային հարաբերությունների ու ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի օրակարգերի անբաժան մասն ու 15 տարի շարունակ Մինսկի խմբի համանախագահներն ու ՄԱԿ Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամ պետությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի ղեկավարները հաստատել են, որ հակամարտությունը պետք է լուծվի բանակցությունների միջոցով և ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Հետևաբար, այդ ինստիտուտների համապատասխան արձագանքի բացակայության դեպքում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ Բաքվում ընդունված «դատավճիռները» հավասարապես վերաբերում են այդ երկրների ու միջազգային կազմակերպությունների ղեկավարներին:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարում է՝ մենք հետևողականորեն պայքարելու ենք մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության ու մեր ժողովրդի՝ հայրենի բնակավայրեր վերադառնալու համար և համոզված ենք, որ ի վերջո արդարությունը հաղթելու է, և իրական հանցագործները ստանալու են իրենց արժանի պատիժը:

ԱՌՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ



Մնացել է ընդամենը 115 օր՝ մինչև այն օրը, երբ Հայաստանը կունենա Նոր սկիզբ, կբացվի Նոր դարաշրջան, և մեր՝ «Ուժեղ Հայաստանը», կլինի բոլորիս իրականությունը:



Սամվել Կարապետյանը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ և այդ կուսակցությունից ՀՀ վարչապետի թեկնածու

Սամվել Կարապետյանի խոսքը՝ ուղղված «Ուժեղ Հայաստան» կուսակցության համաժողովի մասնակիցներին

Սիրելի հայրենակիցներ, գործընկերներ և համախոհներ,
2025 թվականի հուլիսի 4-ին, երբ դեռ մեկ ամիսը կայանաքիս չէր լրացել, դիմեցի ձեզ ու ասացի իմ նախածնունդյան մասին, որն այսօր իրականություն է դառնում: Այդ օրը միասին որոշեցինք, որ միասնական մեկ բռունցք դառնալով՝ մտնում ենք քաղաքական պայքարի մեջ: Հանուն մեր հայրենիքի լավ ապագայի: Ինձ կալանավորելով, կալանքի տակ պահելով՝ փոքրիկ խմբակը կարծում էր, որ կլռեցնեն, կմեկուսացնեն ոչ միայն ինձ, այլև Հայաստանի ձայնը, մեր ժողովրդի ձայնը, մեր քաղաքացու ձայնը, ձեր բոլորի ձայնը: Բայց նրանք հերթական անգամ սխալվեցին ու ձախողեցին: Հիմա մեր ձայնն ավելի բարձր է հնչում: Հիմա մենք ձեզ հետ ավելի ուժեղ ենք, քան երբևէ:



ված է, բանի որ իշխանությունը ձախողել է ամեն ինչ՝ արտաքին քաղաքականությունը, ներքին քաղաքականությունը, սոցիալական ոլորտը: Տնտեսության վիճակը կարելի է բնորոշել մեկ նախադասությամբ՝ աղքատ ենք ու խրված պարտքերի մեջ:
Մեր երկրին ամեն տեսակի արհավիրք, դժբախտություն ու թուլություն բերածները վերջին շրջանում միայն խոստանում են ու

խուսում են մի բանից՝ թույլ խաղաղությունից: Խաղաղությունն առանց ուժեղ պետության կոչվում է «հանձնվել»: Նրանք հանրությանը մոլորեցնում են, թե իբր ուժեղ բանակ ունենան համարժեք է պատերազմի: Սա հերթական սուտն է՝ հանրությանը վախեցնելու համար: Մենք ուզում ենք խաղաղություն, ուզում ենք Ուժե՛ր և արժանապատիվ խաղաղություն: Աշխարհում ոչ մի երկիր չի կարող իրական խաղաղության մասին բանակցել՝ խաղաղություն աղերսելով: Մենք կուժեղացնենք մեր բանակն ու պաշտպանությունը՝ Նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, ժամանակակից պաշտպանության ծրագրի մշակմամբ և դրա ներդրմամբ: Որովհետև ուժեղ խաղաղությունը պահանջում է ուժեղ ու ժամանակակից բանակ:
Մենք մեր հայրենակիցներին առաջարկվելիք ծրագրում չենք խաբելու, որ պաշտոն ստանանք ու առաջին որոշմամբ պարզակամարներ սահմանենք: Հի կարելի դատարկել պետական բյուջեն ու լցնել սեփական գրպանները, այլ պետք է անել ճիշտ հակառակը: Մի առիթով հայտարարել էի Նույնիսկ՝ մեր սեփական գրպանների հաշվին պարտավոր ենք հարստացնել մեր երկիրը:
Մեր առաջարկելիք ծրագիրը ամենաիրատեսականն ու լավագույնն է լինելու ու լայն ճանապարհ է բացելու դեպի ուժեղ Հայաստան: Մեր մեծ թիմը և ես անձամբ՝ աշխատում ենք ոչ թե երկրի տնտեսության դանդաղ վերակենդանացման, սոցիալական իրավի-

ճակի որոշակի բարելավման, այսինքն «յուր գնալու» ռեժիմին վերադառնալու համար, այլ որպեսզի հստակ ու արագ բացվի տանենք Հայաստանը սրընթաց զարգացման, իսկ մարդկանց՝ դեպի տեսանելի բարեկեցություն: Բարեկեցություն, որտեղ մարդիկ արժանապատիվ աշխատանքով վաստակում են արժանապատիվ աշխատավարձ:

Շուտով հետևողականորեն կպատմենք ձեզ մեր բոլոր ծրագրերի մասին, որոնք բացառիկ են Հայաստանի համար ու թույլ կտան արագորեն լուծել մեր ժողովրդի կենսամակարդակի բարձրացման գլխավոր խնդիրը:

Մենք ուզում ենք Հայաստանը դարձնել արժանապատիվ ապրելու և արժանապատվորեն աշխատելու, վարձատրվելու երանելի տուն, այլ ոչ թե խեղճ օթևան, որտեղից ուզում են փախչել:

Ինձ հարցնում են՝ այս վիճակում ինչու՞ որոշեցի մտնել քաղաքականություն:

Ես ծնվել եմ Հայաստանում, ես գիտեմ մեր քաղաքում և գյուղում ապրելու դժվարություններն ու բաղձրությունը: Ես չեմ կարող անտարբեր նստել ու հանգիստ նայել, թե ինչպես են իմ հայրենիքը տանում աղետի ու կործանման: Ես ստեղծող մարդ եմ: Իմ կյանքի ընթացքում տանայակ երկրներում հազարավոր բարիքներ եմ ստեղծել՝ շենքեր, գործարաններ, աշխատատեղեր, հիվանդանոցներ, դպրոցներ: Բարի համբավս թույլ է տվել բազմաթիվ գործարար կապեր ստեղծել աշխարհով մեկ:

Ու իմ ստեղծելու այդ ներուժն այսուհետ պետք է ամբողջ ուժով ծառայեցնեն Հայաստանին ու մեր ժողովրդին:

Միտելի հայրենակիցներ, գործընկերներ և համախոհներ,

Մնացել է ընդամենը 115 օր՝ մինչև այն օրը, երբ Հայաստանը կունենա Նոր սկիզբ, կբացվի Նոր դարաշրջան, և մեր՝ Ուժեղ Հայաստանը, կլինի բոլորիս իրականությունը: Հայաստան, որտեղ մեր Սփյուռքը, դրսում ապրող մեր բույներն ու եղբայրները կրկին կզգան իրենց Հայաստանում, ինչպես իրենց ամենալավ ու ամենաապահով տանը: Մեզ համար առաջնահերթություն է լինելու ոչ թե Սփյուռքից նվիրատվությունները, այլ Հայաստանի հետ իրական էմոցիոնալ կապը:

Հայաստան, որը կունենա պրոֆեսիոնալ, անկախ ու ինելյացի դիվանագիտություն: Պետություն, որը կխոսի բոլոր հարևանների ու կաշխատի բոլոր գերտերությունների հետ, բոլորի հետ:

Մեր դիվանագիտական հարաբերությունների հենքը պետք է լինի մեր երկրի առջև առկա մարտահրավերները խաղաղ ու պրոֆեսիոնալ կերպով լուծելը, այլ ոչ թե աշխարհաքաղաքական խարդավանքների մեջ մտնելը:

Ընդամենը 115 օրից բոլորը կտեսնեն, որ «Ուժեղ Հայաստանը» ոչ միայն կուսակցության անուն է: Սա խոստում է, որն այսօր տալիս ենք Հայաստանի ողջ ժողովրդին ու ողջ հայությանը, իսկ վաղը դարձնելու ենք իրականություն:

Ընտրությունը բոլորիս առջև հստակ է. թույլ առաջնորդություն, թե՞ ուժեղ առաջնորդություն, բաժանո՞ւմ, թե՞ համախմբում, ինքնիշխանության շարունակական գիշում, թե ինքնիշխանության ամրապնդում, նվաստացում, թե արժանապատվություն, հուսահատություն, թե՞ ՀՈՒՅԱ...
Ուժեղ Հայաստանի կառուցումը հենց նաև ՀՈՒՅԱԻ մասին է:

Լավ իմացե՛ք՝ Հայաստանի Նոր, խաղաղ, ապահով ու բարեկեցիկ կյանքի կառուցումը սկսելու ենք ընտրությունների հենց հաջորդ օրվանից՝ հունիսի 8-ից:
Մեր վճռական, համառ ու չհանձնվող մեծ թիմի հետ միասին չենք կորցնելու ոչ մի օր ուժեղ Հայաստան կառուցելու ճանապարհին: Ու վստահ եղե՛ք՝ անպայման հաջողելու ենք:

ՄԵՐ ԶԵՎՈՎ՝ ԴԵՂԻ ՈՒՇԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ:
12 ՓԵՏՐՎԱՐԻ 2026Թ.





ՀՀ ԱԺ ընտրությունները՝ 2026 թ. հունիսի 7-ին

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասով և 93-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական

օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասը՝ 1. Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակել 2026 թվականի հունիսի 7-ին: 2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»,- ասվում է հրամանագրում:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է մայիսի 8-ից հունիսի 5-ը

ԿԸՀ-ից հաղորդագրություն են տարածել. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փետրվարի 9-ի արտահերթ նիստում հաստատել է 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված ԱԺ հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Այսպիսով, կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն ընտրություններին մասնակցելու համար օգտատարի ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում է ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով փետրվարի 9-ից մինչև ապրիլի 23-ը: Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են ապրիլի 13-ից մինչև ապրիլի 23, ժամը 18:00: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է ապրիլի 23-ից

մինչև մայիսի 3-ը, ժամը 18:00-ն: Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ տրամադրվում են մինչև մայիսի 3-ը: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է մայիսի 8-ից հունիսի 5-ը: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող 5 բառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է մինչև փետրվարի 17-ը: Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրման վերաբերյալ դիմումը և գանձաձային լրատվության միջոցի ներկայացուցիչների

ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են փետրվարի 7-ից մինչև մայիսի 28-ը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դիտորդների հավատարմագրման վերաբերյալ դիմումները ԿԸՀ են ներկայացվում փետրվարի 7-ից մինչև մայիսի 3-ը: Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են մինչև մայիսի 13-ը: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները՝ կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են մինչև մայիսի 13-ը: Ընտրությունների անցկացման միջոցառումների ամբողջական ժամանակացույցը հասանելի է ԿԸՀ կայքում: //



Եվրախորհրդարանի պատգամավորները Բաքվին կոչ են արել ազատ արձակել հայ գերիներին

Եվրախորհրդարանի պատգամավորները Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ պատանդներին ազատելու կոչ են արել: Հայտարարությունում դատապարտել են 15 հայերի նկատմամբ Բաքվի դատարանի կայացրած շինծու վճիռները:

Նշելով, թե Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության և հաշտեցման ուղղությամբ «նշանակալի քայլեր են ձեռնարկվել», այս ընթացքում էլ Հայաստան է վերադարձվել 4 հայ գերի, կոչ են արել «զարգացնել դրական դիմադրական»: «Հաշտության առաջնությունը կոչ ենք անում Ադրբեջանի իշխանություններին այսուհետ էլ զարգացնել դրական դիմադրական և ազատ արձակել բոլոր հայ կալանավորված անձանց», - նշված է հայտարարության մեջ: Են պատգամավորները նշել են, թե նրանց ազատ արձակումը «կլինի բարի կամքի նշանակալի դրսևորում և ևս մեկ կարևոր քայլ՝ Հայաստանի Կովկասում երկարատև խաղաղության հաստատման ուղղությամբ»: TERT.AM

Բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով որևէ գույք տալը (խոստանալը) առաջացնում է քրեական պատասխանատվություն

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն տեղեկացնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասով և 93-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասը՝ 1. Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակել 2026 թվականի հունիսի 7-ին: 2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»,- ասվում է հրամանագրում:

վստահված անձի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով որևէ գույք տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելու առաջացնում է քրեական պատասխանատվություն: Միևնույն ժամանակ, Հակակոռուպ-

ցիոն կոմիտեն իրազեկում է, որ իրեն վերապահված լիազորությունների և գործիքակազմի ամբողջ ծավալով ընտրական գործընթացի նկատմամբ իրականացնում է մշտադիտարկում և վերահսկողություն՝ հորդորելով գերմուտ բարեգործության արգելք խախտող որևէ անօրինական գործողությունից՝ պարզաբանելով, որ օրենքով սահմանված պահանջների ցանկացած խախտում արժանանալու է համարժեք և խիստ իրավական արձագանքի»,- ասված է հաղորդագրությունում: //

ԵՄ-ին անդամակցելու հնարավորության դեպքում Հայաստանը ստիպված կլինի ընտրություն կատարել ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև



Նի ժողովուրդը պետք է որոշի՝ որ միավորման մեջ լինել: Օվերջուկը հավելել է, որ Հայաստանի ընտրությունը կազդի ոչ միայն տնտեսական հարաբերությունների, այլև «մաքսած ամեն ինչի» վրա: Ռուսաստանի փոխվարչապետի խոսքով՝ Հայաստանը հասկանում է ԵԱՏՄ-ի հետ իր կապերի կարևորությունը, սակայն միևնույն ժամանակ, Հայաստանում մեծ թվով մարդիկ ցանկանում են ավելի սերտ կապեր հաստատել Եվրամիության հետ:

«Նրանք հանդիպում են, գրուցում, ստորագրում փաստաթղթեր: Սա, առաջին հերթին, վերաբերում է վիզային ռեժիմի ազատականացմանը և Եվրամիության ստանդարտների ներդրմանը», - ասել է ՌԴ փոխվարչապետը:

Նա շեշտել է, որ Մոսկվան ուշադիր հետևում է ստանդարտներին և տեխնիկական կանոնակարգերին վերաբերող հարցերին, բանի որ դա կարևոր է ԵԱՏՄ ընդհանուր շուկայի պահպանման համար: Հայաստանի կողմից ներկայումս ընտրվող ստանդարտները, ըստ Օվերջուկի, չեն հակասում ԵԱՏՄ-ում առկա ստանդարտներին:

05.02.2026

Ցերեկույթ՝ նվիրված Համլետ Քոչարյանի հիշատակին

Կապանի մշակույթի կենտրոնում փետրվարի 7-ին տեղի ունեցած հիշատակի ցերեկույթին մասնակցում էին Համլետի հարազատները, մասնավորապես դուստրերը՝ Ելլին և Անի Քոչարյանները, մարտական ընկերները, համայնուհայրերը:

1988-ի փետրվարից սկսած Արցախի արդար պահանջատիրության ցույցերին ու հանրահավաքներին հնչում էր Համլետի կշռադատող ու հատու խոսքը: Երբ հայ-ադրբեջանական հակամարտությունը սկսվել էր սրվել, Համլետն իր ջոկատով ապահովում էր Գորիս-Կապան ավտոճանապարհի անվտանգությունը: Իսկ ընդհանրապես նա ակտիվ գործունեություն էր վարում հասարակական-քաղաքական դաշտում: Մասնակցել է Կապանի սահմանամերձ գյուղերի և Գորիսի շրջանի Շուռնուխ, Խնձորեսկ, Կոռնիձոր գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

Համլետ Քոչարյանը զոհվել է 1991 թ. մայիսի 6-ին՝ մարտական գործողություններից առաջ զենքի փորձարկման ժամանակ տեղի ունեցած պայթյունից:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Կապան քաղաքի Աջախուր թաղամասը վերանվանվել է նրա պատվին: Համլետ Քոչարյանի հիշատակի ոգեկոչման նախաձեռնող և միջոցառման կազմակերպիչ Բագրատ Բաղդասարյանը մանրամասնեց օրվա խորհուրդը: Այնուհետև Աննա



Դավթյանը ներկայացրեց դարաբաղյան շարժման ժամանակ նրա գործունեությունը, Արթուր Դանիելյանը նոր մանրամասներ ներկայացրեց նրա հասարակական-քաղաքական կյանքից: Ելույթ ունեցողները՝ Համլետի զինակից Մարտուն Մուրադյանը, նրա ազգակից Գագիկ Հայրապետյանը, Սուսաննա Մարտիրոսյանը և ուրիշներ հուշեր պատմեցին, որոնցով փոքրիշատե ամբողջացավ հայրենիքի նահատակի կերպարը: Առանձնապես հուզիչ էր Համլետի քրոջ՝ Անահիտի՝ Եկրանից հնչած պատմությունն իրենց ընտանիքի, մասնավորապես Համլետի դժվարին մանկության և պատանեկության մասին: Եկրանից հնչեց Կազգեն Սարգսյանի խոսքը. «Հանրապետության ամենատաղանդավոր մարդկանցից մեկն էր, ամենատաղանդավորն ու ամեն

նաողբերգիկը: Համլետը գաղափարի մարտիկ էր, իսկ գաղափարը չի մեռնում: Հարյուր տեսակ կառավարություն կփոխվի, բայց նրա նման մարդիկ են, որ երկիրը երկիր են պահում, կառավարությունը՝ կառավարություն: Զանի որ մենք ունենք Համլետի պես մարդիկ, ազգը չի մեռնի»:

Ներկաները մտովի մի պահ տեղափոխվեցին 1980-ական թվականների վերջը, երբ հնչեց Համլետի հեղինակած «Մի քնիր, իմ բախկ» երգը: Միջոցառման ավարտին ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից, փոխգնդապետ Ելլին Քոչարյանը երախտագիտություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին և ներկաներին՝ հոր հիշատակը ոգեկոչելու համար:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցուցահանդես-վաճառք՝ Իրանի իսլամական հեղափոխության 47-րդ տարեդարձի առթիվ

Իրանի իսլամական հեղափոխության 47-րդ տարեդարձի առթիվ փետրվարի 7-ին և 8-ին Կապանում գտնվող ԻԻՀ գլխավոր հյուպատոսարանում կազմակերպվել էր իրանական ապրանքների ցուցահանդես-վաճառք:

1979-ի փետրվարի 11-ին հասարակական տարբեր խավերի մասնակցությամբ Իրանի ժողովրդական հեղափոխությունը հաղթեց, որն էլ սկսվեց տոնվել որպես «Իրանի իսլամական հեղափոխության» հաղթանակի օր: Անցած 47 տարում, չնայած խիստ պատժամիջոցներին, բոլոր ոլորտներում երկիրը համաշխարհային մակարդակով մեծ առաջընթաց է գրանցել: Հատկապես տնտեսության, գիտության, բժշկության, մշակույթի, օդատիեզերական և ռազմական ոլորտներում: Այդ ամենի մասին հյուպատոսարանի առաջին հարկում բացված ցուցահանդեսի վահանակներն էին պատմում՝ ներկայացնե-

լով երկրի տարբեր բնագավառներում իրավիճակն իրանական հեղափոխությունից առաջ և հետո:

Այդ մասին ցուցահանդես-վաճառք այցելած մարդկանց համար ցուցադրվեց տեսաֆիլմ:

Իսկ դրսում կազմակերպվել էր ցուցահանդես-վաճառք, տարավարներում ներկայացված էին պարենային ապրանքներ, լվացող պարագաներ, տարբեր տեսակի պահածոներ, միրգ ու քաղցրավենիք, զանազան գորգեր, հուշանվերներ: Մատուցվում էր բուրավետ թեյ:

Սա արդեն երրորդ ցուցահանդես-վաճառքն էր, որ կազմակերպվում է Կապանում: Այստեղ հանդիպեցինք Հաբիբ Դիդարին՝ Թավրիզի Իսլամական արվեստի պետական համալսարանի ցուցահանդեսների բաժնի կազմակերպիչին: Նա ցուցահանդեսին էր ներկայացրել համալսարանի ուսանողների և Թավրիզի արվեստագետների աշխատանքները՝ կերամիկական իրերի նմուշներ, տարբեր զարդեր, ձեռքի աշխատանքներ: Հաբիբ Դիդարը հայտնեց, որ նպատակ ունեն Կապանի արվեստի քոլեջի հետ կազմակերպել համատեղ ցուցահանդես:



Ցուցահանդես-վաճառքը շարունակվեց փետրվարի 8-ին՝ աշխույժ առևտրով, միջոցառմանը տոնական երանգներ հաղորդեցին Իրանի Գիլան նահանգի «Գիլխան» երաժշտախմբի կատարումները:

Տոնական այդ օրերին մենք հանդիպեցինք Նաև Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին, ով չափազանց կարևորում է հայ-իրանական մշակութային կապերը, Իրանի գիտատեխնիկական նվաճումները Այոնիքի հանրությանը ներկայացնելը:

Ամեն ինչից բացի Իսլամական հեղափոխության 47-րդ տարեդարձն այդկերպ՝ տոնականորեն նշանավորելը ևս մեկ օրինակ է այն իրողության, որ չնայած ԱՄՆ-ն շարունակում է սպառնալիքներ ուղղել մեր բարեկամ այդ երկրին, բայց Իրանի ժողովուրդը չի դադարեցնում իր արժանապատիվ ու հպարտ երթը դժվարությունների և փորձությունների միջով:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների համատեղ հայտարարությունը

Փետրվարի 9-10-ը պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում էր գտնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխնախագահ Չեյմս Դի Վենսը:



Հ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ փոխնախագահ Չեյմս Դի Վենսի հանդիպումից հետո տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև փաստաթղթի ստորագրման արարողություն: Ստորագրվել է «Միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման ոլորտում ՀՀ կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության մասին» համաձայնագրի բանակցությունների ավարտի վերաբերյալ համատեղ հայտարարությունը:

Իրանի դեմ պատերազմը կտարածվի տարածաշրջանի մյուս երկրների վրա

Իրանի գերագույն առաջնորդ Ալի Խամենեին հայտարարել է, որ Իրանի դեմ պատերազմը կտարածվի տարածաշրջանի մյուս երկրների վրա:



«**Ես անկեղծորեն ասում եմ, որ եթե պատերազմ լինի, այն անպայման տարածաշրջանային կլինի**», – ասել է նա՝ երիտասարդների հետ հանդիպման ժամանակ:



Եթե հարձակում տեղի ունենա, մենք կպատասխանենք ցնցող, արագ և շատ հզոր հակահարվածով

Մենք կարևոր դասեր ենք քաղել և արժեքավոր փորձ ձեռք բերել նախորդ պատերազմից: Ներկայումս մեր բախտիկ հրթիռները գտնվում են իրենց դիրքերում, մեր ուժը մնում է անսասան, մենք վերանայել ենք մեր հիմնական հնարավորությունները և այժմ էլ ավելի լավ ենք պատրաստ: Այս մասին ասել է Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին:

«Սա ամենապարզ ուղերձն է, որը մենք կարող ենք հղել ԱՄՆ-ին. **եթե հարձակում տեղի ունենա, մենք կպատասխանենք ցնցող, արագ և շատ հզոր հակահարվածով**», – ասել է նա: //



Վաշինգտոնը մտադիր է ավարտին հասցնել TRIPP-ը և վերաձևակերպել Հարավային Կովկասի լոգիստիկ քարտեզը

ԱՄՆ փոխնախագահ Չեյ Դի Վենսի՝ Հարավային Կովկաս կատարած շրջագայությունն աննախադեպ է: ԱՄՆ-ի նման դիվանագիտական ակտիվությունը հստակորեն ուրվագծում է Սպիտակ տան նոր առաջնահերթությունները Հարավային Կովկասում. գրել է *Ивестия*-ն:



«**Գլխավոր շահագրգռվածությունն Անդրկովկասի երկրները Ռուսաստանի ազդեցության ոլորտից հանելն է՝ տարածաշրջանը Ռուսաստանից անջատելը և, հնարավոր է, նրա համար ևս մեկ լարվածության օջախ ստեղծելը**», – նշել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության պրոֆեսոր Բորիս Մարտինովը:

Նրա խոսքով՝ ընդհանուր առմամբ՝ Անդրկովկասի երկրներն ամբողջ աշխարհի համար ռազմավարական նշանակություն ունեն, և հենց այստեղ է թաքնված ամերիկացիների գործողությունների տրամաբանությունը: Քունարկումը կարող է ներառել նաև Հայաստանի վերջնականապես դուրսբերումը ՀԱՊԿ-ից և, հնարավոր է, ԵԱՏՄ-ից՝ նրան մղելով դեպի ավելի սերտ կապեր և համաձայնագրեր Եվրամիության հետ:

Համաշխարհային ռազմական տնտեսության և ռազմավարության ինտերնետի փոխտնօրեն Նիկոլայ Նովիկը համարում է, որ TRIPP-ի մեկնարկը Հարավային Կովկասն «աշխարհաքաղաքական փակուղուց» վերածում է Միջին միջանցքի կենտրոնական հանգույցի:

«**TRIPP-ի ինտեգրումը, ինչպես սպասվում է, կկրճատի Կենտրոնական Ասիայից Եվրոպա ապրանքների առաքման ժամանակը 18-ից մինչև 12 օր: Այն ստեղծում է անխափան երկաթուղային և ճանապարհային կապեր Ադրբեյջան-Հայաստան-Նախիջևան-Թուրքիա երթուղով՝ շրջանցելով Վրաստանով անցնող ավելի երկար երթուղիները**», – ընդգծել է փորձագետը:

Ըստ ՌԴ կառավարությանը կից Ֆինանսական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան Պավել Սելեզնևի՝ նոր տրանսպորտային երթուղին կդառնա ինչպես Ռուսաստանի միջով անցնող Յուրախային միջանցքի, այնպես էլ Իրանի միջով անցնող հնարավոր երթուղիների

այլընտրանք՝ ավելի ամրապնդելով Թուրքիայի դիրքերը՝ որպես ՆԱՏՕ-ի հարավային թևում հիմնական բաշխման կենտրոնի:

«**Ռուսաստանի համար TRIPP-ի իրականացումն իր ներկայիս տեսքով՝ ԱՄՆ կառավարման ներքո, ստեղծում է մի շարք մարտահրավերներ, որոնք ազդում են ինչպես տնտեսական, այնպես էլ պաշտպանական ոլորտների վրա**», – հավելել է Սելեզնևը:

Ինչպես գրել է *Ивестия*-ն, չնայած «Վաշինգտոնյան շրջանակը» ստեղծվել է դեռևս 2025 թվականի ամռանը՝ Դոնալդ Թրամփի անձամբ մասնակցած զագաթնաժողովում, նախագծի իրականացումը դեռևս բախվում է քաղաքական խոչընդոտների: Հիմնական խոչընդոտը մնում է Ադրբեյջանի պահանջը, որ Երևանը փոփոխի սահմանադրական ձևակերպումները, որոնք Բաքուն համարում է թաքնված տարածքային պահանջներ: Այնուամենայնիվ, Վենսի ներկայիս այցը ցույց է տալիս, որ Վաշինգտոնը, կարծես թե, մտադիր է ավարտին հասցնել հարցը և վերջապես վերաձևակերպել Հարավային Կովկասի լոգիստիկ քարտեզը: //

Գաղափար, պայքար, ժառանգություն. Լժոճեհին նվիրված հուշ-ցերեկույթ Կապանում

Լժոճեհի ասույթներով ու ազգային մեղեդիներով էր լցվել Կապանի ակումբադարանային միավորման կենտրոնական գրադարանը, որտեղ փետրվարի 12-ին տեղի ունեցավ ռազմական ու գաղափարական առաջնորդ, Լեռնահայաստանի սպարապետ Գարեգին Լժոճեհի 140-ամյակին նվիրված գրական-երաժշտական հուշ-ցերեկույթ:



Նրանց մեր շրջապատում»,- ասաց նա: Միջոցառման ընթացքում ներկաները



Նաև ծանոթացան Լժոճեհի գաղափարական հայացքներին, ընթերցվեցին նրա հեղինակած բանաստեղծություններից հատվածներ, հնչեցին հայտնի ասույթները:

Ներկաների տարիքային բազմազանությունը՝ սկսած դպրոցականներից մինչև հասուն մարդ, վկայում էր, որ Լժոճեհի կերպարը հետաքրքրում է բոլոր սերունդներին:

Միջոցառման ավարտին ներկաները հանդես եկան ելույթներով՝ ընդգծելով Լժոճեհի կերպարի արդիականությունը և խոսելով այն արժեքների մասին, որոնք արտացոլված են նրա կյանքի ու գաղափարների մեջ:


ԻԶԱ ԱՍՏԱՏՈՅԱԼ

Յունիսի 1-ից «Յին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոցի մուտքը կդառնա վճարովի

Խնձորեսկի հնավայրն այցելուներին առավել բարեկարգ ու հասանելի դարձնելու աշխատանքներն ակտիվորեն մեկնարկել են դեռ նախորդ տարի: Իրականացվել են մաքրման, բարեկարգման, զբոսաշրջային արահետների ստեղծման և հարդարման աշխատանքներ: Յին ու Նոր Խնձորեսկն իրար կապող ղեկավարանցանելի հատվածներում բարե և փայտե աստիճաններ են կառուցվել, արահետները գծանշվել են ու կահավորվել ուղղորդող և տեղեկատվական ցուցանակներով: Տեղեկատվական մոդուլային կենտրոնի տեղադրման նպատակով հողային աշխատանքներ են մեկնարկել: ԻնՖո կենտրոնն ապահովելու է համալիր ծառայությունների մատուցում (զբոսավարի, պահպանության, անվտանգության, և այլն):

Նախատեսված բարեկարգման ու հարդարման աշխատանքների ավարտից հետո՝ հունիսի 1-ից, «Յին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոցի մուտքը կդառնա վճարովի: Տոմսերի վաճառքից գոյացած գումարը կուղղվի հնավայրի պահպանմանն ու զարգացմանը: 33 ԿԳՄՍ նախարարություն Պահպանության ծառայություն ՊՈԱԿ

04.02.2026



Նիկիտա Սիմոնյանին՝ թիմի գլխավոր մարզչին, ում գլխավորությամբ «Արարատը» հասավ աննախադեպ նվաճման:

Ավագ, վերջերս՝ 99 տարեկանում վախճանված ֆուտբոլի լեգենդը չհասցրեց դիտել կինոնկարը, որի մասին ոչ միայն գիտեր, այլև օգտակար խորհուրդներ էր տվել, թե ինչպես նկարահանել: Մասնավորապես, ֆիլմը հիշեցնում է, թե որքան դժվար էին տրվում հաղթանակները «Արարատին», ում դեմ կանգնած էին այն ժամանակվա հզոր թիմերից մեկը՝ Կիևի «Դինամոն», ինչպես նաև մոսկովյան թիմերը՝ «Դինամոն», «ԲԿՄԱ»-ն, «Սպարտակը», «Տորպեդոն», Լենինգրադի «Չենիթը» և այլն: Բայց «Արարատը» ոսկե դուբլով կարողացավ մտնել Խորհրդային Միության ֆուտբոլի պատմության մեջ: Ֆիլմում խոսք է գնում պատվիրված խաղերի մասին և այլ խարդավանքների, որոնց կարողացավ հաղթանակել «Արարատը» իր չեմպիոնական ճախարակին:

Ֆիլմի ռեժիսորն է Միեր Մկրտչյանը, գլխավոր պրոդյուսերը՝ Վալերի Սահարյանը:

Նիկիտա Պավլովիչի կերպարը մարմնավորել է Եգոր Բերունը՝ հայտնի հեռուստահաղորդավար և մեկնաբան: Նկարահանվել են հայտնի և անհայտ անուններ՝ Սոֆյա Դոնյանց, Քսենիա Ալֆյորովա, հանրահռչակ դերասան Սերգեյ Շակուրով, Բաբկեն Չոբանյան, Դավիթ Մանույան (Հայաստանի ֆուտբոլի հավաքականի նախկին ֆուտբոլիստ), Անդրանիկ Կարապետյան՝ Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետության նախկին գեղարվեստական ղեկավար, Լևո Դավթյան (Կապանի պետության ղեկավար), ով կերտել է թիմի ավագ Զովհաննես Չանազանյանի կերպարը և ուրիշներ:

Ցավոք, այս հետաքրքիր ու պատմական արժեք ունեցող ֆիլմի ցուցադրումը մարզկենտրոն Կապանում անցավ կիսադատարկ դահլիճում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մոսկվայի և Երևանի պրեմիերաներից հետո «Ոսկե դուբլը» ցուցադրվեց նաև Կապանում

Կինոնկարը հանդիսատեսին տեղափոխում է անցյալ դարի 70-ական թվականները, երբ Երևանի «Արարատը» ոսկե դուբլ ձևակերպեց՝ նվաճելով Խորհրդային Միության ֆուտբոլի բյուրեղապակյա գավաթը և երկրի առաջնությունում գրավելով առաջին տեղը՝ հռչակվեց չեմպիոն:

Այդպիսի մի հրճվանք ազգս ապրել էր դրանից ուղիղ տասը տարի առաջ, երբ Տիգրան Պետրոսյանը նվաճեց շախմատի աշխարհի չեմպիոնի կոչումը՝ թագադրվելով որպես այդ մարզաձևի արքա: Ֆիլմը կոչվում է նաև «Արարատ-73», բանգի այդ թվականին էր հայ ֆուտբոլի աստղային ժամը: Ֆիլմը, որ հետաքրքրական դրվագներ է վերակենդանացնում այդ հեռավոր օրերից, նվիրված է ֆուտբոլի լեգենդին՝

Այդ թվականին հայ ժողովուրդը մայր Հայաստանում և ի սփյուռս համայն աշխարհի՝ օրինական հպարտություն



Ֆիլմը, որ հետաքրքրական դրվագներ է վերակենդանացնում այդ հեռավոր օրերից, նվիրված է ֆուտբոլի լեգենդին՝ Նիկիտա Սիմոնյանին՝ թիմի գլխավոր մարզչին, ում գլխավորությամբ «Արարատը» հասավ աննախադեպ նվաճման:



ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Այսօր չորս կողմից փորձում են հոշոտել մեզ, և միակ տարբերակն ու ներկայիս գերիսնդիրը մշակույթի խրամատն արժանապատվորեն պահելն է»



«Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնի մասնաճյուղ՝ Չարժիսում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ փետրվարի 7-ին Չարժիսի մշակույթի տանը տեղի է ունեցել «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնի մասնաճյուղի բացումը: Տոնական իրադարձությանը ներկա էր և էլույթ ունեցավ հայ ժողովրդական երգերի մեկնաբան, ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանը (Մրո), ով Չարժիսում նման կենտրոն հիմնադրելու նախաձեռնողներից էր: Բացման արարողությունից հետո Արսեն Գրիգորյանը պատասխանեց մեզ հետաքրքրող հարցերին:

Արսեն Գրիգորյան, Ձեզ ճանաչում են ամբողջ հանրապետությունում, բայց փորձեք ներկայանալ նաև մեր ընթերցողին:

– Նախ՝ արվեստագետ եմ: Երկրորդ՝ «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնի հիմնադիր ղեկավարն եմ: Ինչքան եմ հիմնադրել «Գուբան»-ը, որը հայ ազգային երգ ու պարի փառատուն է: – Անդրադառնանք «Արար»-ին, ե՞րբ է կյանքի կոչվել այդ նախագիծը: – 2017 թվականին, ութ տարի է անցել: Այս նախագիծը լուծում ենք ազգային արվեստի պահպանման խնդիրը, որը մեր օրերում չափազանց կարևորություն է ներկայացնում:

Տեղյակ ենք, որ մինչև Չարժիսի կենտրոնի կամ մասնաճյուղի հիմնումը նման օջախներ էք կազմակերպել Սյունիքի այլ բնակավայրերում նույնպես: Ինչպե՞ս է հղացել Սյունիքում «Արար»-ի կենտրոններ ստեղծելու գաղափարը:

– Ինձ համար իրականում տարածաշրջանների միջև տարբերություն չկա... Ես պարզապես նկատեցի, որ մեր հասարակության մեջ ոչ թե երկրորդական, այլ տասներորդական պլան է մղվել հայոց ազգային մշակույթը: Ավելին՝ այսօր աղբը ներխուժում է մեր իրականությանը: Մեր մշակույթն ունի և՛ լավ, և՛ վատ դրսևորումներ, բայց երբ խոսում ենք ազգային մշակույթի մասին՝ խոսում ենք նախնա-նաջ մեր ինքնության մասին: Եվ այսօր դրա պահպանումը կենսական անհրաժեշտություն է: Ինչո՞ւ: Որովհետև ներկայիս պատերազմը մեր ինքնության դեմ է: Տեղի ունեցողն այլևս պատերազմ չէ միայն տարածքների համար, այլ պատերազմ տարածք պահողի դեմ: Երբ տարածք պահողին ոչնչացնում են՝ այդ տարածքը փաստացի արդեն կորսվում է: Եվ փորձում են աշխատել այդ տրամաբանության մեջ... Ինչպես կ'ընդհատվի 2017 թվականին ստեղծեցի այս նախագիծը, այնուհետև՝ կենտրոնը: Սկսեցինք մեկ համայնքում կամ բնակավայրում: Բերդավանից ենք սկսել, և անցած ութ տարվա ընթացքում հասանք 47 բնակավայր և գյուղի, հիմա ունենք 23 կենտրոն, Չարժիսի-նր 23-րդն է: – Ինչպե՞ս Չարժիսը հայտնվեց Ձեր ուշադրության կենտրոնում՝ լեռնային,

բարձրադիր գյուղ՝ ձմռան տարեշրջանում հաճախ փակ ճանապարհներով:

– Ճանապարհների պատճառով է, որ մոտ երեք շաբաթ հետաձգեցինք Չարժիսի կենտրոնի բացումը: Ամեն ինչ պատրաստ էր, բայց ճանապարհները՝ փակ: Եվ միայն հիմա կարողացանք անցկացնել նախատեսված միջոցառումը: Կպատմեմ, թե ինչպես Չարժիսը հայտնվեց մեր տեսադաշտում: Մոտ մեկ տարի առաջ Մոսկվայում էի, ընկերներս ասացին՝ կա հայրդի, ով ցանկանում է հանդիպել ինձ հետ: Հաջորդ օրը գնացի և հանդիպեցի մոսկվայաբնակ հարժիսեցի Ավետ Քոլյանին: Նա ծանոթ էր մեր նախագծին ու մեր կենտրոններին: Իհարկե, ինչքան էլ տեղեկություններ հարողդեցի նախագծի վերաբերյալ: Նա ասաց. «Ես Չարժիսից եմ և շատ եմ ցանկանում, որ մեր գյուղում նման կենտրոն ստեղծվի, որպեսզի կարողանանք գյուղի երեխաներին մշակութային այդ դաշտ բերել, ազգային մշակույթի դաշտ»: Ես համաձայնվեցի նրա հետ. այսօր մենք իսկապես պարտավոր ենք պահպանել ազգային մեր ինքնությունը: Ստացվեց, որ Ավետի հետ Նոյն կերպ ենք մտածում: Մոսկվայից վերադառնալուց հետո այցելեցի Չարժիսի միջնակարգ դպրոցի տնօրեն Նորայր Եսայանին: Սկզբում մտածում էինք կենտրոնը բացել դպրոցում, բայց տեղը չէր բավականացնում: Զետո մշակույթի տան այս հատվածն առաջարկեցին: Այդ պահից սկսվեց գործընթացը, որը հեշտ չէր: Այնուամենայնիվ կարողացանք հասնել մեր նպատակին. մշակույթի տան այս հատվածն ամբողջապես ավերված էր, վերանորոգեցինք և համապատասխան պայմաններ ստեղծեցինք: Աշխատանքները կատարում էինք՝ համագործակցելով Չարժիսի «Իդեալ» հիմնադրամի հետ: Այսօր տեսնում եք՝ շենքը կա, երեխաներն արդեն այստեղ են... Մասնագետի խնդիր ունեինք, քանի որ գյուղում նման մասնագետ չկա: Շինուհայրում գտանք համապատասխան մասնագետ. շաբաթական երկու անգամ կգա Չարժիս, լուծել ենք նրա տեղափոխման հարցը: Շատ ուրախ եմ այս ամենի համար, որովհետև սա սովորական երևույթ չէ. մենք պետք է տեր կանգնենք մեր ազգային մշակույթին և տեր ենք կանգնում: Հավանաբար նկատել էք, թե ինչպես է ՅՈՒՆԵՍԿՕ-ն Այնթապի անեղնագործությունն ընդունել իբրև Թուրքիայի մշակութային ժառանգություն, որը մերն է: Եթե մենք չպաշտպանենք մեր ազգային ու բաց թողնենք, ապա նրանք պատրաստ են ամեն ինչ հավիչ-

տակել և իրենցով անել ու իրենց վերագրել:

– Իսկ Սյունիքի ո՞ր բնակավայրերում էք մինչև հիմա նման կենտրոններ ստեղծել:

– Առաջինը՝ Տեղ գյուղում, այնտեղ Չարա Դոլուխանյանն է դասավանդում, այնուհետև՝ Վաղատուրում, որտեղ կարպետ գործել են սովորում: Մի քիչ խնդիրներ առաջացան Կոռնի-ծորում, բանակցություններ սկսեցինք դպրոցի տնօրենի հետ, բայց շատ ձգձգվեց... Փաստացի կենտրոններ ունենք Տեղ, Վաղատուր գյուղերում, իսկ այսօր նաև Չարժիսում: Շուտով աշխատանքներ կսկսենք Շուռ-նուխում: Մի խոսքով՝ փորձում ենք հասնել Սյունիքի գյուղեր, և մեր երեխաներին բերել հայ ազգային մշակույթի դաշտ: – Ինչպե՞ս էք կարողանում լուծել անհրաժեշտ միջոցների՝ թելերի, դագահների և մյուս պարագաների հարցը: – Այս դեպքում համագործակցում ենք Չարժիսի զարգացման «Իդեալ» հիմնադրամի հետ, մյուս բնակավայրերում նույնպես գործընկերներ ունենք: Ի սկզբանե մեզ տրվում էր նաև աջակցություն ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրերի շրջանակում, բայց դա դարձրեցրել են այդ աջակցությունը: – Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով: – Կարծում եմ՝ պիտի ենթադրեք, թե ինչու... Պատերազմից հետո սկսեցին դրամաշնորհներ չտրամադրել մեր հիմնադրամին, նույնպես վարվեցին «Գուբանի» հետ... Փառք Աստու, գտնվեցին հայրդիներ, որոնց համար շատ կարևոր է հայ ժողովրդի ինքնության պահպանումը, նման մարդիկ էլ աջակցում են մեզ: Նրանցից մեկն էլ, ինչպես կ'ընդհատվի, Ավետ Քոլյանն է: Ես կցանկանայի, որ բոլորի համար առաջնային լինեի հայ ժողովրդի ինքնության պահպանման հարցը: Այսօր մենք այն կարևոր խաչմերուկում ենք, որ պետք է ընտրություն կատարենք՝ ապավինել բանի՞, թե՞ հացի: Աստված մեզ տվել է այդ ընտրության իրավունքը, և պետք է ապրենք այնպես, ինչպես մեր նախնիներն են ապրել՝ բանիով: Հացը կվաստակենք, կստեղծենք, մենք ստեղծարար, արարող ժողովուրդ ենք... Հայրությանը թողնենք մի կողմ և ապրենք հենց այդ նպատակով. այսօր այլ տարբերակ չկա, չորս կողմից փորձում են հոշոտել մեզ, և միակ տարբերակն ու ներկայիս գերիսնդիրը մշակույթի խրամատն արժանապատվորեն պահելն է: **ՀԱՐՑԱԶՈՐՈՒՄՅՈՒՄ ՄԱՐԻԱՍ ԼԱԶԱՐՅԱՆԻ**

Հայ ժողովրդական երգերի մեկնաբան, ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանի (Մրո) մտահղացմամբ ու նախաձեռնությամբ 2017-ից գործող «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնն արդեն իսկ ներկայություն ունի հանրապետության 47 բնակավայրում՝ 23 մասնաճյուղով:

«Արար»-ի հիմնական գործառնությունը ժողովրդական ստեղծագործության կենսունակության ապահովումն է՝ աճող սերնդին փոխանցելու միջոցով: «Արար»-ն աստիճանաբար ինտեգրվում է նաև Սյունիքի հոգևոր-մշակութային կյանքին:

Վաղատուրից և Տեղից հետո կենտրոնը հերթական մասնաճյուղը բացեց Չարժիսում, որտեղ առաջին կուսուցանվել միայն գորգագործություն ու կարպետագործություն (ուսուցումը կիրականացնի Տաթև Դադուկյանը):

Չարժիսում արվեստի նման օջախ հիմնելու նախաձեռնության հեղինակներն են Արսեն Գրիգորյանը, Չարժիսի «Իդեալ» հիմնադրամը և մոսկվայաբնակ հարժիսեցի Ավետ Քոլյանը:

Փետրվարի 7-ին գյուղի բնակիչները, ինչպես և բազմաթիվ հյուրեր հավաքվել էին մասնաճյուղի բացման արարողությանը, իսկ մասնաճյուղի տարածքը, որ գյուղի մշակույթի կենտրոնի երկսեյականոց հատվածն է, նախապես հիմնանորոգվել ու պատշաճ տեսքի էր բերվել, նաև կահավորվել հիմնադիրների ջանքերով: Մուտքի ժապավենը կտրելու իրավունքը վերապահվեց կենտրոնի ամենափոքրիկ ասնուհի Սոֆիա Հայրապետյանին, որից հետո ներկաները ծանոթացան կենտրոնի կահավորանքին, հնարավորություններին և ուսումնաստեղիակական միջոցներին:

Բացման արարողությանը ելույթ ունեցան Արսեն Գրիգորյանը (Մրո), Չարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Նորայր Եսայանը, գյուղի վարչական ղեկավար Միեր Թարխանյանը, Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը, «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, կենտրոնի սանուհիներ Նառա Վլադիմիրյանը, Արմինե Վլադիմիրյանը և կենտրոնի վարպետ Տաթև Դադուկյանը: Արսեն Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցել են Չարժիսի կենտրոնի ստեղծմանը, նաև հույս հայտնեց, որ կենտրոնին արդեն անդամագրված 28 աշակերտին կհետևեն գյուղի այլ դպրոցականներ ևս, իսկ ժամանակի ընթացքում գորգագործության ու կարպետագործության հետ մեկտեղ կուսուցանվեն ժողովրդական այլ ստեղծագործություններ նույնպես: Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը համայնքապետարանի պատվոգրերով պարգևատրել էր Արսեն Գրիգորյանին և Ավետ Քոլյանին: Համայնքապետը պատվոգիրը հանձնեց Արսեն Գրիգորյանին. Ավետ Քոլյանը ներկա չէր բացման արարողությանը:

Ի դեպ, Չարժիսի մշակույթի կենտրոնի գործունեությունը վերջին մեկ տարում նոր բովանդակություն է ձեռք բերել: Հիմնադրվել է գործում են Երիտասարդների զարգացման կենտրոնն ու Սյունիքի ազատագրական պայքարի թանգարանը: Դրանց փետրվարի 7-ին ավելացավ գորգագործության ու կարպետագործության սրահը:

ՄԱՐԻԱՍ ԼԱԶԱՐՅԱՆ

Ավանդ, մեզ հետ չէ այլևս վաստակավոր Էներգետիկ-ճարտարագետ Գրիշա Յայրապետյան

Փետրվարի 7-ին երկրային կյանքին հրա-
ժեշտ տվեց Գրիշա (Յուրի) Լևոնի Յայրա-
պետյանը:

Ծնվել է 1941 թ. փետրվարի 9-ին Կա-
վարտ գյուղում:

Յայրենի Կավարտում նախնական
կրթություն ստանալուց հետո մեկնել է քաղա-
քամայր Երևան և ուսանել Էներգետիկական
տեխնիկումում: Ավարտելուց հետո գործուղ-
վել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբի-
նատ՝ ճակատագրով Է Զանգեզուրի էլ-
եկտրափոխի էլեկտրամոնտյոր:

1961-64 թթ. խորհրդային բանակում ծա-
ռայելուց հետո վերադարձել ու ամբողջովին
նվիրվել է նախընտրած մասնագիտությանը:

1964 թ. անդամագրվել է Զանգեզուրի էլ-
ցանցի աշխատավորական համույթին:

Աշխատանքին զուգընթաց՝ 1964-70 թթ.,
սովորել և ավարտել է Մոսկվայի լեռնային
ինստիտուտի «Լեռնային աշխատանքների
էլեկտրաֆիկացում և ավտոմատացում» բա-
ժինը: Զանգեզուրի էլցանցի ղեկավարությունը
շուտով նրան է վստահել կազմակերպության
ռելեական պաշտպանության և ավտոմատի-
կայի ծառայության պետի պաշտոնը:

1975 թ. նշանակվել է Զանգեզուրի էլցան-
ցերի գլխավոր ճարտարագետ:

1992 թ. ղեկտեմբերից Գրիշա Յայրապետ-
յանն արդեն գլխավորում էր Զանգեզուրի էլ-
ցանցերը:

1997 թվականից ղեկավարում էր «Բարձ-
րավոլտ էլեկտրացանցեր» ընկերության
«Զանգեզուր» մասնաճյուղը՝ պատասխանա-
տու այդ պաշտոնը վարելով մինչև 2017 թ.:

Տարիներ շարունակ գլխավորելով մեր
երկրամասի Էներգետիկ համակարգը՝
հմտությամբ և արդյունավետորեն ուղղորդել
է Սյունիքի էլեկտրակայանի յուրահատուկ այդ
ուղորդը:

Մեծ է Գրիշա Յայրապետյանի ներդրումը
Սյունիքում նոր բարձրավոլտ գծերի, ենթակա-

յանների կառուցման, եղած ենթակայանների
հզորության ավելացման գործում: Անձամբ
է ղեկավարել Շինուհայրի, Քաջարանի, Կա-
պանի, Ագարակի, Սիսիանի և Գորիսի հզոր
ենթակայանների վերակառուցման և ընդլայն-
ման աշխատանքները:

Անուրանալի ծառայություն է մատուցել
կառավարման նոր մեթոդների ու նոր տեխ-
նոլոգիաների ներդրման ոլորտում:

Նրա ակտիվ դերակատարությամբ է Յա-
յաստանի էլեկտրահամակարգը սկսել զուգա-
հեռ աշխատել Իրանի Իսլամական Յանրապե-
տության Էներգահամակարգի հետ: Դա 2002
թվականին էր, երբ շահագործման հանձն-
վեց «Ագարակ» փոխանցատիչ կետը, որն էլ
կապվեց Շինուհայրի ենթակայանի հետ, ինչի
շնորհիվ էլ՝ բարեկամ երկու երկրի միջև կա-
տարվեց էլեկտրափոխանակում, որը շա-
րունակվում է մինչև հիմա:

Այդ բոլորով հանդերձ, ինչպես ինքն էր
խոստովանում, իր աշխատանքային գործու-
նեության ամենադժվարին փուլն Արցախյան
առաջին պատերազմի տարիներն էին:

Զանգեզուրի էլցանցի ղեկավարումը
ստանձնեց Արցախյան պատերազմի ամենա-
թեժ շրջանում: Պարբերաբար հրետակոծու-
թյուններից տուժում էին նաև ենթակայանները,
տրանսֆորմատորները, էլեկտրագծերը: Եվ
անհրաժեշտ էր լինում դրանք վերականգնել՝
շրջանցելով բազմաթիվ ռիսկեր:

Ժամանակակիցներն ուշագրավ փաստ են
հիշեցնում՝ պատերազմական օրերին առանց
էլեկտրամատակարարման չի մնացել ոչ մի
առաջին կարգի սպառող՝ հիվանդանոց, հա-
ցի գործարան...

Միայն մի դրվագ այդ օրերից. շրջափակ-
ման մեջ էին հայտնվել Շիկահողի ենթաշը-
ջանի գյուղերը: Նրա ղեկավարությամբ և կա-
պանիցի Էներգետիկների ջանքերի շնորհիվ՝
կարճ ժամանակամիջոցում, կառուցվեց 6 կմ
երկարությամբ շրջանցիկ էլեկտրագիծ՝ են-
թաշրջանի գյուղերի անխափան էլեկտրամա-



տակարարումն ապահովելու համար:

Վճռորոշ այդ օրերին նաև հնարավորու-
յուն էր փնտրում Էներգիա մատակարարել
Կապանի լեռնահարստացման կոմբինատին,
որպեսզի շատ թե քիչ համաչափ բաբախի
քաղաքի ամենախոշոր ձեռնարկության գար-
կերակը:

Գրիշա Յայրապետյան բազմավաստակ ու
նորարար Էներգետիկը միշտ էլ մտահոգված
է եղել ոլորտի համար բարձրորակ կադրերի
պատրաստման խնդրով: Եվ սիրով էր իր հա-
րուստ փորձին ու գիտելիքներին հաղորդակից
դարձնում երիտասարդ սերնդին:

Այսօր էլ Էներգետիկայի ոլորտում (և ոչ
միայն Կապանում) կան բազմաթիվ շնորհալի
մասնագետներ, ովքեր արդարացիորեն իրենց
վարպետ-դաստիարակն են համարում Գրիշա
Յայրապետյանին:

Տասնամյակներ շարունակ, կարելի է ասել,
նա յուրօրինակ կապող օղակ էր երիտասարդ
սերնդի ու տարածաշրջանի Էներգետիկ հա-
մակարգի երախտավորների միջև: Իսկ վեր-
ջիններին հանդեպ քանիցս իր ակնածանքն
էր արտահայտում՝ Օնիկ Դավթյան, Յուրաչ
Դավթյան, Վարդան Կարախանյան, Սաշիկ
Յայրապետյան, Միշա Խաչատրյան, Վովա
Քարամյան...

Ուշագրավ են Գրիշա Յայրապետյանի
մարդկային հատկանիշների մասին բնու-

թագրումները, որոնք մեր տրամադրության
տակ են նաև, որոնց հեղինակները ոչ միայն
կապանցիներ են, այլև Մեղրու, Քաջարանի,
Գորիսի, Սիսիանի տարածաշրջանի ճանաչ-
ված դեմքեր, հանրապետության Էներգետիկ
ուղրտի տարբեր տարիների ղեկավարներ:

Այդ բնութագրումներից մի քանիսը պատ-
շաճ ենք համարում հիշել...

Համեստ, բարի, գործիմաց, բարձր ինտե-
լեկտի տեր անձնավորություն:

Աշխատող մարդու հարգն իմացող, գնա-
հատող ղեկավար:

Ոլորտի բարձրորակ մասնագետ, հմուտ
ղեկավար, արտադրության փորձառու կազ-
մակերպիչ:

Ազնվության, ընկերասիրության օրինակ...

Այդ ամենի շնորհիվ էր, որ վայելում էր իր
գլխավորած կոլեկտիվների, ինչպես և Կա-
պանի բնակիչների, նաև հանրապետության
Էներգետիկ ոլորտի ավագ սերնդի բազմաթիվ
ներկայացուցիչների անկեղծ սերն ու ակնա-
ծանքը:

Գրիշա Յայրապետյանի անբասիր ու հայ-
րենակեր աշխատանքը քանիցս արժանացել
է գնահատանքի, այդ թվում՝ կառավարական
ու գերատեսչական պարգևների:

Այդ առումով առավել հիշարժան է 2003 թ.
ղեկտեմբերին ԱՊՀ երկրների Էներգետիկայի
խորհրդի որոշումը, որի համաձայն նա ար-
ժանացավ «ԱՊՀ վաստակավոր Էներգետիկ-
ճարտարագետ» բարձր կոչման:

Գրիշա Յայրապետյանը ճանաչված մաս-
կավարժ Սուսաննա Բաբայանի հետ ստեղծել
է գեղեցիկ ընտանիք, ունեցել են երեք որդի,
ովքեր էլ մեր հանրության մեջ մեծ հեղինա-
կություն են վայելում:

Առանց չափազանցության կարող ենք
փաստել և սերունդների հիշողությանը
հանձնել այսպիսի մի ճշմարտություն՝ Գրի-
շա (Յուրի) Լևոնի Յայրապետյանը մոտ կես
դար արժանավայել տեղ է զբաղեցրել ոչ միայն
Սյունիքի, այլև հայ նշանավոր Էներգետիկնե-
րի շարքում, ինչի համար էլ, համոզված ենք,
նրա անունը մնայուն կլինի Սյունիքի մարզի
և հատկապես Կապանի տարածաշրջանի նո-
րագույն շրջանի պատմության էջերում:

Յիշատակն արդարոց օրինությամբ եղի-
ցի...

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»



Ադրբեջանում Նախիջևանի սահմանադրությունից հանել են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի անվանումները, Նախիջևանն Ադրբեջանի անբաժանելի մաս ճանաչել

Նախիջևանի Ինքնավար Հանրապետու-
թյան սահմանադրության Նախաբանը փո-
փոխվում է, իսկ Նախիջևանի սահմա-
նադրությունից հանվում են Մոսկվայի և
Կարսի պայմանագրերի անվանումները.
գրում են Ադրբեջանական լրատվամի-
ջոցները:

Սա արտացոլված է Ադրբեջանի
«Նախիջևանի Ինքնավար Հանրապե-
տության սահմանադրության մեջ փո-
փոխություններ կատարելու մասին» սահմա-
նադրական օրենքի նախագծում:

Նախիջևանի Ինքնավար Հանրապետու-
թյան գործող Սահմանադրության Նախա-
բանում նշվում է, որ Նախիջևանի ինքնա-
վարության հիմքերը դրվել են միջազգային
պայմանագրերով՝ 1921 թվականի մարտի
16-ի Մոսկվայի պայմանագրով և 1921 թվա-
կանի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանա-
գրով, որոնք ներկայում ուժի մեջ են:

Առաջարկվող նոր տարբերակում նշվում է,
որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետու-
թյունն Ադրբեջանի Հանրապետության անբա-
ժանելի մասն է:

Նախիջևանի ներկայիս Սահմանադ-
րությունը հիմնված է 1991-ի օգոստոսի 30-ի



«Ադրբեջանի Հանրապետության պետական
անկախության վերականգնման մասին»
հռչակագրում, 1991 թվականի հոկտեմբերի
18-ի «Ադրբեջանի Հանրապետության պե-
տական անկախության մասին» սահմանադ-
րական ակտում և 1995 թվականի նոյեմբերի
12-ին համաժողովրդական քվեարկությամբ՝
հանրաքվեով ընդունված Ադրբեջանի սահմա-
նադրությունում ամրագրված սկզբունքների
վրա:

Քննարկումներից հետո օրինագիծն ըն-
դունվել է երկրորդ քվեարկությամբ:

Երախտագիտության խոսք

Ի խորոց սրտի երախտա-
գիտություն են հայտնում
Երևանի Ս. Վ. Մալայանի ան-
վան ակնաբուժական կենտրո-
նի բաժանմունքի վարիչ Արմեն
Վարդանյանին և ակնաբույժ
Սիրանուշ Մատիկյանին՝ իմ
հանդեպ դրսևորած հոգատար
վերաբերմունքի և բարձր
պրոֆեսիոնալիզմի համար:

Նրանց շնորհիվ վերա-
կանգնվեց իմ աչքի լույսը,
ինչի համար մաղթում եմ
նրանց անսպառ եռանդ,
բարեկեցություն, ամենայն
բարիք: Միշտ լինեք
կենտունակ:
Աստված ձեզ պահապան:
ԱՆՂՈՅՈՒՇԱՆ ԴԱԿԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՂ ԶԱԿԱՏԵՆ

Սյունյաց Երկիր
Հիմնադրվել է 2003 թ. «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿՊԱՏԱՍՈՒՄԱՆ ԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ,
բ. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում
և հեղինակներին չեն վերադարձվում:
Խմբագրության և հեղինակների
կարծիքները կարող են չհամընկնել:
Երկրորդ ներկայացվել մեքենագիր
վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» – ԾԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագ-
րությունը պատասխանատվություն չի
կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
© Նշանի տակ տպագրվում են
գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱ-
ՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան,
Բագրատունյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպագրական թիվ՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
18.02.2026թ.: